


մարմնանալոյ Տեսոն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (եր• 104): Որովհետև արդէն հաւաստիք կայ, որ կաթուղիկէն էլ չէ Զուարթնոց եկեղեցու ձեռվ շինուածը, ուրեմն պէտք է ենթադրել՝ որ այն հիմնովին տապալուել է, և այժմ հետքն անգամ չըկայ:

### Յ. Եսիսկոպոս.

(Կը շարաւնակուի)



## ԲԱՆԱԿԱՆՈՒԹԵՍՆ ԱՐՇԱԼՈՅՑԸ.

### Ա.

ՄՏՔԻ ԸՆԹԱՑՔԸ.

Հոգեկան մի քանի յատկութիւններ կան, որոնք ահասգին դեր են կատարում մանկական հասակում՝ հիմք դընելով ապագայի համար մտքերի գործունէութեան, կասպակցութեան և կանոնաւոր արտայայտութեան։ Եթէ յիշրաւի անուրանալի է, որ մանուկն իւր առաջին 6—7 տարիներում աւելի շատ բառերի պաշար է ժողովում, քան մնացած ամբողջ կեանքի ընթացքում՝ նշանակում է այդ հասակում նա ունի անդնահատելի հոգեկան յատկութիւններ, մի թանկագին դանձ, որ դժբաղդաբար նոյն ուժով ու զօրութեամբ չի գործում յետագայ տարիներում։ Մանկան այդ անդնահատելի յատկութիւններն են նորա վառերկայութիւնը, սուր դիտելու ընդունակութիւնը, յիշողութիւնն ու աշխուժութիւնը։ Իւրաքանչիւր հոգեբան—մանկավարժ լաւ ըմբռնելով մանկան հոգու այս գլխաւոր յատկութիւններն՝ ըստ այնմ էլ որոշում է, թէ ո՞ր հասակում և ո՞ր տարիներում հասկանալի կը լինին մանկան այս կամ այն մոքերն ու դաղափարները, և այդ դիտակցութեան

հիման վրայ նոքա մանկան դաստիարակութեան հիմքն են դնում։

Մանկան սկզբնական տարիներում երեակայութեան գործունէութիւնը մի այնպիսի անհրաժեշտ գործօն է, մի այնպիսի օժանդակութիւն, որ նորա բաղմակողմանի դարդացումն ու յառաջ մղումը ամէն դաստիարակի բարոյական սուրբ պարտքը պէտք է լինի։ Բայց, իհարկէ, խրաքանչիւր լաւ բան ունի իւր չափն ու սահմանը, և զարդացնելով երեակայութիւնը, ամեննեն չը պիտի բարձի թողի անել մի այլ կարևոր յատկութիւն, այն է դիտելու կարողութիւնը, կամ ուրիշ խօսքով հարցասիրութիւնը։ Այս կողմից խիստ կարևոր են հոգեբան—մանկավարժ Զէմն Սելլիի այն նկատողութիւնները, որ անում է երեակայութեան ու դիտողութեան նկատմամբ։ Նա հետեւողականօրէն ցոյց է տալիս մանկան մտքերի կանոնաւոր յառաջախաղացութիւնն ու այդպէս բանականութեան սկզբնաւորութեան հասնելը։ Նորա կարծիքով մանկան գլխաւոր յատկութիւններից մէկն այն ընդունակութիւնն է, որ նա եւրեակայութեան ուժով և արտասովոր աշխատութեամբ կարողանում է իրական աշխարհի հետ կատարելապէս լուրջ յարաբերութիւն պահպանել, ուրեմն և խիստ անարդարացի կը լինի կարծել, թէ մանկան միաքը նորա հարուստ երեակայութեան ուժով ստեղծած խարուսիկ մտքերի մի շտեմարան է։ Ումանք կարծում են, թէ մանուկներից մի քանիմն աւելի հակուած են երեակայելու, իսկ միւսները իրանց շրջապատը դիտելու։ Այս կարծիքը մասամբ ճիշտ է, ինչպէս նաև այն, որ մանկան դարդացողութեան մի յայտնի շրջանում գերակշռում է դիտելու յատկութիւնը, միւսում երեակայելու։ Բայց Սելլիի կարծիքով այդ երկու յատկութիւններն ես միաժամանակ կարող են մանկան մէջ լինել։ Խոկապէս խելացի մանուկները իրական աշխարհի մանրակրկիտ դնողներ լինելով՝ միւսոյն ժամանակ խիստ ձգտումն են ցոյց տալիս մտքով սաւառնելու մի ուրիշ աւելի գեղեցիկ, լուսումը աշխարհ։ Այս երկու յատկութիւնները համարեա միշտ մէկը միւսին յա-

ջորդում են աննկատելի ու շատ արագ կերպով. բայց պատահում է նաև, որ մէկը գերակշռում է միւսին մի առ ժամանակ, և այդ կախումն ունի հոգեկան տրամադրութիւնից. Յաճախ մանուկը կամենալով հանգիստ տալ իւր մտաւոր ուժերի լարման, լուրջ և գործունեայ տրամադրութիւնը յանկարծ փոխում է և տիսուր ու մտածկոտ է երեսում։ Պատահում է նաև, որ ուսումնարանում սու փորող մանուկը խորասուզուելով դասի տուած մտքերի մէջ, յանկարծ թռչում է երեւակայութեան աշխարհը. կամ որևէ տառի կամ քառի տեսքը յիշեցնում է նորան մի յայտնի պատկեր, և նա սկսում է զբաղուել այդ պատկերով։

Մանուկը ոչ միայն դիտում է, այլ խորասուզուում իւր դիտողութեան մէջ՝ ըմբռնելու համար իւր դիտածը և աշխատելով հասկանալ իրեն գրաւող պատկերի բովանդակութիւնը. այս միջոցին նա ընդունում է լուրջ, զարմանալի մոտածկոտ տեսք։ Նատերը տեսած կը լինեն, թէ ինչպէս մտածող և հետաքրքրուող մանուկներն աչքերը լայն բացած, ոուր հայեացքով նայում են մի նոր հրաշալի բանի, կամ լսում են իրանց մօտ պատմած փոքրիկ պատմութիւնը։ Բրիտ Գարդը, թէև չափազանցեցրած, բայց ճիշտ կերպով նկատում է թէ՝ «այն բոլոր մարդիկ, որոնք սիրով ուսումնասիրում են մանկան, կհամաձայնեն յուսով եմ», որ նորա մէջ տիրապետում է ոչ թէ խաղալու ձըգոտումն, այլ լրջութիւնը։ Այժմ տեսնենք՝ ինչպէս է հասկանում Զէմս Սելին մտքի լրջութիւնը։

Յաճախ մանկան դիտողութիւնը զարմանալի ճիշտ է լինում, բայց միայն սահմանափակ չափով. նա դիտում է առարկայի այն մասը, որն աւելի շուտ է գրաւում նորա ուշադրութիւնը. օր, երբեմն դոյնն այնպէս է գրաւում նորան, որ նա մոռանում է առարկայի ձևը։ 18 ամսական մի աղջիկ, որը լաւ ճանաչում էր ոչխարը՝ մի անդամ տեսնելով սպիտակ ոչխարների հօտի մէջ երկու սև ոչխար, անուանում է նոցա շուն. և այդ սխալը յառաջացել էր անշուշտ նորանից, որ ճանաչում էր սև դոյնով մի շուն,

և ահա դոյնի կատակցութիւնը առաջ է բերում նորա  
մտքի մէջ նոյնացումն առարկաների: Առարկաների ձևերը  
իւրացնելու գործում մանուկներն աւելի միակողմանի են  
և շուտ են ընդհանուր գաղափարի հասնում, օր. մի քա-  
նի մանուկներ դիտել են, որ չները սուր գունչ ունին, և  
նոքա ամէն մի քիչ ու շատ այդ յատկութիւնն ունեցող և  
նոյն հասակի կենդանու համարում են շուն: Այս միակող-  
մանի դիտողութիւնն աւելի աչքի է ընկնում այն ժամա-  
նակ, երբ մանուկը դեռ նոր է սկսում ընդհանուր գա-  
ղափարներ և հասակացողութիւններ կազմել: Թէ ինչու մա-  
նուկը երևակայութեան այդպիսի սխալ թուիչքներ է ա-  
նում՝ մի առարկան միւսի հետ շփոթելով, դա կախումն  
ունի նորա հոգու այն յատկութիւնից, որ նորա միտքը չի  
շփոթուում առարկաների բարդութեան առաջ նա միայն  
կանգ է առնում իրան աւելի գրաւող յատկութեան վե-  
րայ և խկոյն երևակայութեան ուժով թուչում է, ու նմա-  
նութիւն գտնում իրան յայտնի մի ուրիշ առարկայի հետ  
և նորա անունը տալիս, մինչ հասակաւոր մարդկանց հա-  
մար նմանութիւն չկայ նոցա մէջ: Ի հարկէ, մանկան մըտ-  
քի այս միակողմանի ըմբռնողութիւնն ունի իւր պակաս  
կողմերը, բայց նաև առաւելութիւններ: Այս տեսակէտից  
մանկան և բանաստեղծի մէջ ընդհանուր դիմ կայ, այն  
որ երկումն էլ իրանց կարծիքով կանգ են առնում առար-  
կայի ըոլոր խկական յատկութիւնների վերայ: Կենտրոնա-  
ցնել մանկան ուշադրութիւնը առարկաների որոշ կողմե-  
րի վերայ և ոչ միայն այն կողմի, որը նորան գրաւում է,  
ահա թէ որտեղ է նորա մտքի զործունէութեան սաղմը  
և որտեղ պէտք է սկսուի ուրեմն նորա մտաւոր գործու-  
նէութիւնը: Մանուկը միշտ մտքով սաւառնած չէ մնում,  
նորա դիտողութիւնը կամաց իջնում է այդ բա-  
նաստեղծական աշխարհից, գործնական կեանքն ինքը ստի-  
պում է նորան որոշել և ճանաչել առարկաներն այնպէս,  
ինչպէս անում են հասակաւոր մարդիկ: օր. ոչխարը և  
շունը նա սովորում է զանազանել ի նկատի ունենալով նո-  
րանց բոլոր դիմաւոր յատկութիւնները: դոյնը այս դէպ-

քում երկրորդական դեր է կատարում։ Յետոյ նա վարժուում է տարբերել և ամենափոքր յատկութիւններն, որպէս զի կարողանայ զատել «ուրիշից»՝ իւր բաժանկը, իւր գլխարկը նա պիտի միշտ տարբերէ ուրիշից, և այդստիպում է նորան լաւ դիտելու «իւրիշ»՝ ուրիշից զանազանող յատկութիւնները գտնելու։ Այսպէս, երբ նորա աչքը վարժուում է տարբերութիւններ նկատելու՝ նա արագ յառաջադիմութիւն է ցոյց տալիս, մահաւանդ այն դէպէքում, երբ գէպի որոշ տռարկաններն ունեցած հետաքըլուքրութիւնը զարդացնում է նորա մէջ կենտրոնահալու ուղղութիւնը։ Մանկան դիտելու յատկութիւնը, աւելի երբ նա դրաւուուած է որևէ իրով և լաւ կենտրոնանում է, յաճախ զարմացնում է մեղ իւր կատարելութեամբ և իսկութեամբ, դու նմանում է այն մանրազնին և լայն դիտուզականութեան, որ հասակաւոր մարդկանց օդնում է գիտնական դիտեր անելու և գեղարուեստական գործեր արտադրելու։ Նատ ծնօղներ լաւ հետեւելով իրանց որդւոց այդ բացառիկ չնորհներին, այն յոյսն են ունեցել, որ դոքա լաւ ապագայ կունենան, բայց գմբաղդաբար այդպիսի ընդունակութիւնները շատ անգամ ստհմանափակուել են մտքի զարդացողութեան որոշ արջանով, որից յետոյ թուլացել և անհետացել են, երբ մանկան ուսման են տուել և նա ստիպուած է եղել մի քանի ժամ նստել դրքի առաջ։

Դիտողականութեան հետ միասին ոլիտի յիշել, իրեւ մանկան մտքի թանկագին մի յատկութիւն, որ մանուկը իւր յիշողութեան մէջ կարողանում է վառ պահել այն, ինչ որ ինքը նկատում է կամ ինչով աւելի դրաւուում ու հետաքրքրւում է։ Մանկանց լաւ ճանաչող մարդիկ միանգամայն զարմանում են նրանց հիանալի յիշողութեան վրայ, որով կարողանում են բաւական ժամանակ անցնելուց յետոյ յիշել մի առարկայի կամ մի աննշան գէպքի ամենափոքր մանրամասնութիւնները, ինչպիսին հասակաւորներն անգամ չեն կարող յիշել. օր. 2 տ. 10 ամսականն մի երեխայ վերադառնալով իտալիայից 4—5 ամսից

յետոյ յիշում էր ամենափոքր մանրամասնութիւններով, թէ ինչպէս իւր առաջ քաղում էին խաղողը և դինի էին պատրաստում։ Որպէս զի միտքը զարգանայ և սկսէ դորս ծել՝ անհրաժեշտ է, որ նորա յիշողութեան մէջ զետեղուեն այսպիսի պարզ պատկերներ կամ յիշողութիւններ, նոր հիւ այն հանդամանկքի, որ մանուկը շատ լաւ յիշում է, ինչպէս և դիտում, մինչև իսկ դիտելու ժամանակ յիշու զութիւն գործադրելով՝ նա հասունանում է և դառնում մտախոհ։ միշտ հարց տալով այս կամ այն երեսոյթի միտքը և նշանակութիւնը հասկանալու համար՝ նա համարձակութիւն է ստանում և երբեմն ինքը բացատրում, ինչպէս որ հասկանում է, բայց որպէս զի նա ինքնագիւտակութեան հասնէ և սկսէ դատել իւր շրջապատի և իւր անձի մասին, հարկաւոր են բազմատեսակ առարկաների տպաւորութիւններ և իւր կեանքից առնուած զանազան դէպքեր։

Դառնանք այժմ նորա երեակայութեան։ Մանկան հնարագէտ երեակայութիւնը, որ հարուստ է դրաւիչ իլլիդիաներով, նորա մտքի գործունէութեան համար խիստ մեծ նշանակութիւն ունի. չնորհիւ այն բանի, որ երիտասարդ միտքն այնպէս աշխոյժ ու կենդանի է և իրականութեան նեղ սահմանից գուրս գալով թռիչքներ է գործում՝ աշխատում զանազան դէպքերի ու առարկաների նշանակութիւնը քիչ ու շատ բացատրել իրեն, մանուկը հետզհետէ սկսում է երեսոյթների պատճառները թափանցել և դանել. ինչպէս ամէն մի անհատի կեանքում, այնպէս էլ ամբողջ մարդկութեան պատմութեան մէջ, մենք նկատում ենք այդ երեսոյթը, թէ ինչպէս միտքը դիմում է երեակայութեան օգնութեան։ Հին հեթանոսական աստվածութեանց արձաններն ոչ այլ ինչ են, եթէ ոչ երեակայութեան օգնութեամբ ստեղծած պատկերներ։ Մենք չենք կարող պարզ պատկերացնել մանկան մտքի առաջին փայլի հետ կապուած բոլոր երեսոյթները և հազիւ թէ կարողանանք պարզ պատկերացնել այն տպաւորութիւնները, որ շրջապատող բազմատեսակ բնութիւնը դարթեցնում է

նոր կազմակերպուող մանկան մէջ՝ մենք կարող ենք յետոյ միայն ծանօթանալ նոցա հետ, երբ մանուկը խօսել սովորէ, իւր միտքը կարօղանայ արտայայտել, թէև այդ ժամանակ շրջապատող աշխարհը արդէն կորցրած է լինում իւր նորութիւնների մի մասը և նախնական հետաքրքրութեան տեղ բռնում է փորձառութեան աշխատանքը:

Ուսումնասնիրել ամբողջ ընթացքը, թէ ինչպէս մանկան միտքը փորձում է արտայայտել իւր տպաւորութիւնները լեզուի միջոցաւ՝ ամենամեծ վարձատրութիւնն է գործ դրած աշխատանքի համար: Մանուկն ամէնից առաջ հանդէս է դալիս իրեկ փիլիսոփայ գործնական կեանքում: Ամենագլուխաւոր նշանը, որով կարելի է իւմանալ, թէ մանուկը սովորել է մոտածել, այն է, որ նա կարողանայ համեմատել օր. որևէ մի նկար իւր իսկականի հետ և գտնել մօտաւորապէս, թէ որքան նմանութիւն կայ: Այսպիսի համեմատութիւնները մանկանց հասցնում են այն աստիճանին, որ հոգեբաններն անուանում են ընդհանրացումն կամ դասակարգերի վերածումն, որի շնորհիւ միանման առարկաների մի ամբողջ խումբ նա միացնում է իւր մոքի մէջ մի ընդհանուր անուան տակ: Երբ մանուկը գործ է ածում առարկաների անուններն գիտակցարար, նա արդէն հանդիսանում է իրեկ մի փիլիսոփայ, սկսելով խմբերի վերածել առարկաները իրանց որոշ յատկութեանց հիման վերայ, մանուկը նկատում է՝ նրանց մէջ ընդհանուր միանման յատկութիւններ, օր. ձիերի, ոչխարների, կովերի մէջ. կամ նա իրար հետ կապում է այնպիսի դիտողութիւններ, ինչպէս օր. թէ իւր հայրը երբ է տնից հեռանում ու տուն վերադառնում, երբ է արեգակը մայր մոնում, երբ ծագում ելն. այսպիսով նա հասնում է նոցա փոխադարձ յարաբերութեանց գաղափարին՝ նա գործում է ոչ թէ մեքենաբար այլ գիտակցօրէն: Բայց ինչպիսի թանդ գնով է ձեռք բերում մանուկն այդ յատկութիւնը, որքան ծանր աշխատանքներ պիտի կատարէ նորա փոքրիկ ուղեղը, մինչև որ կարողանայ հասկանալ երեսյթների փոխադարձ յաջորդականու-

թիւնը։ Մի քանի դէպքերում յաջորդականութիւնը հեշտ է խրացնել, օր, այն ընտանիքներում, ուր կարգապահութիւն է տիրում, մանուկը դիտէ որ առաւօտեան թէյ պիտի խմէ, կէսօրին ճաշէ ելն։ Բայց դեռ որքան դժուար է նորա համար դանել, թէ ինչնե մոայլ է մարդու դէմքը, կամ ինչնե է ցաւում նորա դլուխը։

Կեանքի մէջ այնքան շատ են խճողուած ու բարդ եւ բեոյթներ, որ մարդ իսկապէս չի հասկանում, թէ ինչպէս կարող է մանուկը սովորել դատել, եթէ նա օժտուած չը լինի կենդանի ու անզուօտ ձգտումով միշտ որոնելու ամէն տեղ փոխադարձ կապ և ամէն ինչ ընդհանրացնելու, աշխարհը նորան ներկայանում է երրե մի կանոնաւոր և լու կազմակերպուած վայր։ Ամերիկացի 10 տարեկան մի մանուկ, որ ունէր մի կարճահասակ և բարկացկոտ ուսուցիչ և մի ուրիշ երկարահասակ—բարի ուսուցիչ, երբ նորա դասատու նշանակեցին մի երրորդին, նա ասաց նորան պարզամտաբար։ «Պ. ուսուցիչ, վախենում եմ, որ դուք էլ լինիք բարկացկոտ»—«Բայց միթէ ես բարկացկոտ եմ»—«Ո՛չ, բայց դուք հասակով կարճ էք»—Այդ, ի հարսկէ, շուտափոյթ կատարուած մի ընդհանրացում է, բայց կարելի է ասել, որ այդպիսի վերաբերում յատուկ է մանկանց։

## Բ.

### ՄՇՏԱԿԱՆ ՀԱՐՑԱՍԻՐՈՒԹԱՆ ՀԱՍՏԱԿԸ.

Երբ հասնում է մանկան այն հասակը, որ նա կամենում է ճանաչել և խմանալ իւր տեսած կամ իրեն գրաւող իրերը՝ յառաջ է դալիս նրա մշտական հարցախրութիւնը, սովորաբար այդ սկսում է 3-դ տարուայ վերջին, բայց ամէնից յաճախ 4-դ տարուանից, Պրէյերի երեխան առաջին հարցը տուաւ 2 տար, 4 ամսական ժամանակ, Պոլլօկի յիշած մի աղջիկ երկրորդ տա-

բուայ նախավերջին ամսում։ Շատ ագէտ մայրեր և ծըծ-  
մայրներ կարծում են, թէ մանսւկներն իրանց անվերջ  
հարցասիրութեամբ կամենում են միայն ձանձրացնել ի-  
րանց. բարեբախտաբար այդ հայեացքն այժմ շատ տեղե-  
րում փոխում է, և մանկան շրջապատողները հասկաչ  
նում են, որ նորա միաքը անդուսպ ձգտումն ունենալով  
միշտ առաջ ընթանալու, ըրմբուած առարկաներն ու  
երեսյթները բացատրելու՝ նա դիմում է աւելի կարողի  
օգնութեան. մի փորձ է այդ, որով նա ուզում է իւր թե-  
րի կամ չիմացած տեղեկութիւնները լրացնել ուրիշներից,  
մի պահանջ մտաւոր սնունդ առնելու։ Ամենասովորական  
հարցերը, օր. «Այս ինչ ծաղիկ է», կամ «Այս ինչ միջատ  
է»—ցոյց են տալիս, որ մանուկը հասել է այն աստիճանին,  
երբ ըմբռնում է, թէ առարկաներն ունին իրանց ա-  
ռանձին յատկութիւններն ու անունները։ Մի քանի այլ  
հարցեր, օր. «Լուսինը թեեր ունի», կամ «Ո՞ւր են գնում  
օրերը», ցոյց են տալիս մեղ մանկան մողի խակական ըն-  
թացքը և ունեն իրանց ահապին նշանակութիւնը։ Մա-  
նուկը սովորաբար զանազան տեսակ հարցեր է տալիս, ու-  
րոնց մէջ շարունակ լւում է «Բնչպէս, ինչու», և ինչպէս  
ագահ ու յամառ է նա հարցասիրութեան մէջ. յանկարծ  
նա թռիչքներ է անում, ըստ երեսյթին և կապ չունեցող  
առարկաների մասին է խօսում ու հարցնում, բայց ամէն  
մի պատասխանից մի նոր պաշար է աւելացնում իւր ընդ-  
հանուր հասկացողութեան մէջ։ Երեք տարեկան և ինն  
տամական մի մանուկ շփոթեցրել էր իւր մօրը այսպիսի  
հարցերով. «Ի՞նչ են ուտում գորտերը, մկները, թռչուն-  
ներն և թիթեռները. նոքա ինչ են անում, նոցա անուն-  
ներն ինչպէս են, նոքա ինչպէս են կոչում իրանց տնակի,  
փողոցի, հրապարակի անունը են»։ Սոքա թէև յիմար  
հարցեր են թուում, բայց պիտի ի նկատի ունենալ, որ  
այդ հասակում մանուկները կենդանիներին նոյն յատ-  
կութիւններն են վերագրում, ինչ որ մարդկանց։ Ման-  
կանց հարցերի մի գլուխոր յատկութիւնն ես այն է, որ  
նոքա անպատճառ ուզում են իմանալ առարկայի անունը։

Յիշեալ մանուկը բացատրում էր իւր մօրը, թէ նա հասկացել է որ ամէն մի գորտի, մկան, թռչունի և թիթեռնիկի իրանց մայրը անուն է տալիս, ինչպէս իւր մայրը իրան։

Առարկաների անուններն իմանալուց յետոյ յաջորդաբար նորա մտքում ծագում է «ինչո՞ւ» հարցը, որով կամենում է իմանալ շրջապատող երեսթների իմաստն ու պատճառը։ Այս հարցով նա արդէն մի քայլ առաջ է գիշելում։ Կեանքի մէջ նկատելով շատ առարկաներ կամ բազմատեսակ կենդանիներ և չկարողանալով նոցա իւր ծանօթ կենդանիների հետ կապել՝ նա դիմում է հասակաւոր մարդկանց և նրանց պատճառներն է ուզում իմանալ, օր ամենահասարակ հարցերից մէկը՝ «Ինչո՞ւ կատուն մորթ ունի», մենք կը բաւականացնենք նորան, եթէ ասենք թէ՝ «Մորթին նորա մազերն են»։ Այս հասկանալուց յետոյ մանուկները ձգտում են մասնաւորներն ընդհանրացնել և կարդիտակ դնել։ Նորա խիստ հետաքրքրում են իմանալու, թէ ինչպէս են առարկաները շինում, նա պատրաստ է ժամերով նստել և ուշադրութեամբ դիտել, թէ ինչպէս են թրոշունների, երեխանների պատկերները ձեւակերպում ուրիշները, և այնուհետեւ նորա մէջ բուռն ցանկութիւն է յուռաջանում, որ ինքն ևս նոյնը շինէ, այդ ցանկութիւնը դրդում է նորան իմանալու, թէ ինչպէս են մի որեւէ բան շինում։ Առաջին քայլափոխում սորա հետ միանում է նորա խելահաս հետաքրքրութիւնը։ մանուկներն այս տեսակէտից յիրաւի մի մի փոքրիկ փելիսոփաներ են, եթէ փելիսոփայութիւնն այնպէս հասկանանք, ինչպէս հները՝ այսինքն իրերի պատճառների գիտակցութիւն։ աշխարհը ներկայանում է նորան իրրի, մի մեծ տուն, որի մէջ առմէն բան շինուած է մարդու ձեռքով, կամ մի տեղից բերուած է, վերջապէս ամէն մի իր ունի իւր ծագման պատճառը։

Պատճառներն իմանալուց յետոյ նա մի քայլ ևս առաջ է գիշելում և հարց է տալիս՝ «Ինչո՞ւ համար», այժմ նա դիմում է արդէն վերջնական նովատակին, շրջապատող

առարկաների ու երեսյթների վերջնական նշանակութեան երբ մանուկը հարցնում է օր. «Ի՞նչու համար է քամին փշում», դորանով նա ուղում է ասել՝ «Ի՞նչ նպատակ կամ նշանակութիւն ունի, որ քամին փշում է»։ Մանկան մըտքի զարգացողութեան ընթացքում կայ մի շրջան, երբ ամէն մի հարցին կարելի չէ լինում խկական բացատրութիւնը տալ. այն ժամանակ պէտք է դիմել մի այլ միջոցի. օրինակ երբ մանուկը հարցնում է՝ «Ի՞նչու են թափուում տերեները», «Ի՞նչու է որոտում», — աւելի լաւ կը լինի բանաստեղծական մտքով պատասխանել և ասել, թէ տերեները յոդնել են ծառի վերայ մնալուց, թէ որոտումն մի հըսկայի աղաղակ է, երբ վատ տրամադրութեան մէջ է լինում կարելի է թոյլատրելի համարել այսպիսի ինքնահնար միջոցների դիմելը, քանի որ երբեմն կենդանական կամ այլ աշխարհից այնպիսի հարցեր են լինում, որ մեզանից ամենախմաստուններն անգամ բացատրել չեն կարող. բայց և այնպէս այս միջոցը բաւական վտանգաւոր է։ Մանուկները կարծում են, որ ոչ միայն շնչաւոր և անշունչ առարկաներն ունին նոյն յատկութիւններն, ինչ որ մարդիկ, այլ և որ նրանց արածը որոշ միտք ու նպատակ ունի և որ այդ նպատակը կապ ունի մարդու կեանքի հետ. օր. 2 տար. 2 ամս. մի մանուկ նստած էր մի անգամ յատակի վերայ վատ տրամադրութեան մէջ. բարձրացնելով գլուխը՝ նա տեսաւ պայծառ փայլող արել և չարաճընութեամբ ասաց նորան. «Ա'րեգակ, մի համարձակուիր Յովհաննէսի վերայ նայելու»։ իսկ յետոյ աւելի փաղաքչօրէն ասաց. «Ա'րե, մի նայիր ինդրում եմ, թշուառ Յովհաննէսի վերայ»։ Մի ուրիշ մանուկ առաջին անգամ տեսնելով ծովը, կարծեց թէ նա աղաղակում է նորա համար, որ գրգռէ իւր լուղութիւնը. այս հայեացքը յաւաջանում է նորանից, որ մանուկները կարծում են թէ բնութեան բոլոր երկոյթների նպատակը մարդն է. այսպիսի կարծիք յատուկ է նաև անկիրթ ու վայրենի մարդկանց։

«Ի՞նչու» հարցը, որ այնպէս յաճախ տալիս են մանուկները, նշան է, որ նորա զանազան առարկաների նը-

պատակն ու օգուտն են ուղում իմանալ։ Այսպէս, Բինէն համոզուել է դորան չնորհիւ այն բազմաթիւ հարցերի, որ նա տուել է մարդկանց և տեսել, որ նոցա հասկացողութիւնը այլ և այլ առարկաների նկատմամբ կազմուած է մեծաւ մասամբ նրանց օգտակարութեան և նշանակութեան տեսակետից։ Օր. երբ հարցնում են՝ «ի՞նչ բան է դվարկը», նոքա պատասխանում են. «Դա այն է, որ կարեալ է դիմին դնել», «Ի՞նչ է ծառը».—«Այն է, որի տակ կարելի է նստել», և լին ժամանակի ընթացքում առարկաների նպատակն ու օգտակարութիւնը երկրորդական տեղ է բռնում և մանուկն աւելի շատ հետաքրքրում է իմանալու՝ ինչպէս են շինում առարկաները, կամ որտեղից են ծագել, նա ուղում է իմանալ, թէ ովքեր են շինել ծագերը, թոշունները, աստղերը, նա ենթագրում է, որ մէկը շինել է դոցա և այդ մէկը ներկայանում է նորա աշքին իբրև հիւսն։ Նոյնպիսի դադախար է կազմում նա Արարջի մասին և ա.

Ո՞չ մի բան այնքան ցաւալի չէ, որքան այս հարցերի հանդեպ լուռ մնալը և չիմանալը երեսյթների մօտառը պատճառը, որով կորչում է գէպի դիտութիւնն ունեցած հաւատը։ Մանուկը այն հասկացողութիւնն ունի, որ հասակաւոր մարդն ամէն բան կարող է իմանալ. այդ յուսով էլ նա դիմում է նորան, որքան յուսահատ և անսմսիթար կը լինէր նա, եթէ այդ հասակից ըմբռնէր, թէ ամէն բան դեռ բացատրուած չէ դիտութեան համար և դիտութիւնն անդօր է։ Ի հարկէ, մանուկները կեանքի մէջ կը զարմանան և կը շփոթուեն շատ բաներով, ինչ որ կը տեսնեն կամ կը լսեն, բայց դոցա կը կնութիւնն արդէն սովորութիւն կը դառնայ, և նոքա կը վարժուին։ Օր. մի մանուկ մօրը հարցնում է. «Կարող են ձկները ըերանով չնշել ջրի տակ»—իրանք իրանց անձնական փորձով և կամ ուրիշներից քաղած տեղեկութիւններով նոքա երբեմն այնպիսի երեսյթների են հանդիպում, որ զարմանալի է թուռմ. օր. մի մանկան խիստ հետաքրքրում էր ծովը և նա կամենում էր իմանալ՝ ուր է նա հոսում. նա ցանկացաւ ուռ-

նամանները հանել և մտնել ջուրը տեսնելու, թէ դէպի ուր  
են լողում նաւերը, բայց շատ զարմացաւ, երբ իմացաւ  
որ ծովը կամաց կամաց խորանում է և ինքը կարող է  
խեղդուել։ «Մայրիկ, ասաց նա, չէ որ ծովը չէ բարձրա-  
նում սարի չափ, նշանակում է նա իմ գլխից բարձր չի  
կարող լինել։ իմանալով որ ծովը կարող է ծածկել իւր  
գլուխը, նա սկսեց այդ զարմանալի երեսյթի մասին դա-  
տել, որպէս զի կարողանայ իւր առաջուայ կազմած գաղա-  
փարի հետ հաշտեցնել։ Որ և է մի առարկայի շուտով ան-  
յետանալը առած է թուռում մանկան և այդ գաղտնիքը շփու-  
թում է նորա միտքը, նա դեռ գաղափար չունի տարա-  
ծութեան մասին, ուստի և չէ կարողանում ըմբռնել, թէ  
ուր է հօսում ծովը կամ ուր փշում քամին։ Զկարողանա-  
լով պարզ պատկերացնել իրան նոր դէպքերն ու հասկա-  
նալ նոր երեսյթները՝ մանուկը մնում է շուարած նրանց  
բազմութեան առաջ։ Մի չորս տարեկան մանուկ հարցնում  
է. «Մայրիկ, ինչո՞ւ այսքան շատ իրեր կան աշխարհի մէջ,  
եթէ ոչ ոք բոլորը չի ճանաչում, չի իմանում»։ Զի կարե-  
լի պարզ որոշել թէ ինչ միտք է բովանդակում այդ հարցը.  
գուցէ նա բողոքում է շրջապատող առարկաների բազ-  
մութեան համար, որ իւր քանակութեամբ ճեշում է նո-  
րա միտքը, մինչդեռ նա այն համացողութիւնն ունի, թէ  
չի կարող առարկայ գոյութիւն ունենալ, որ մարդկանց զիւ-  
տութեան չենթարկուեր։

Առարկաների ծագումը երեան է գալիս մանկան հա-  
սակում իրեւ մի առած. կենդանի արարածների գոյու-  
թիւնը թուռում է նորան իրեւ մի մեծ գաղտնիք։ Մի մա-  
նուկ ասում էր. «Կան այնքան շատ առարկաներ, որոնց  
մասին ես ուզում եմ տեղեկութիւն իմանալ, իսկ դու,  
մայրիկ, ասում ես թէ այդ ոչ ոք չի կարող իմանալ. ես  
ուզում եմ իմանալ, թէ կատուն ձուեր ածնեմ է, որ նրան-  
ցից ձագեր հանէ»։ Մայրն ասում է, որ կատուն ձու չի  
ածի, այն ժամանակ նա նկատում է. «Ո՞հ, այդ դէպում  
հարկաւոր է, որ նա խնդրէ Աստծուն, որ իրան ձուեր  
տայ, որպէս զի նրանցից ձագեր հանէ»։ Մի ուրիշ հտա-

րեկան մանուկ հաւի և ձուի նկատմամբ հետեւեալ հարցը տուաւ մօրը. «Թէ ձուն չը լինի, որտեղից կը լինի հաւը. ես ուզում եմ ասել՝ որտեղից է յառաջ եկել հաւը, երբ ոչ մի հատ ձու դեռ ես չե եղել»: Մի երրորդ մանուկ շարչարտում էր իմանալու այս հարցը՝ «Ո՞վ էր կերակրում առաջին մանկան», — կամ խօսելով  $\frac{4}{2}$  տարեկան մանկան լեզուով՝ «Երբ բոլոր մորդիկ դեռ ես երեխաներ էին, ով էր նրանց կերակրողը»:

Մարդկային կեանքի սկզբնաւորութիւնը համարեամիշտ առեղծուած է եղել մանկան հետաքրքրութեան համար. այս նկատմամբ նորա հարցերից շատերը վերացական են և դուրս սովորական կեանքի շրջանակից. մանուկն այստեղ հանգէս է դալիս իրեւ վերացական դատող մի փիւլիսովայ, ամենաառաջին մտածողների նման իրերի դոյութեան հարցերով զբաղուելով կամ բոլորի սկզբնապատճառներն որոնելով: Նա հարցնում է օր. «Ո՞վ է ստեղծել Աստուծուն, ի՞նչ կար մինչեւ Աստուած». Նա դաղափար չունի մարդկային գիտութեան սահմանափակ լինելու մասին, երբ մայրը որդու հարցին պատասխանում է, թէ ինքը չը դիւտէ, նա դարձեալ համոզուած է մնում, թէ այնուամենայնիւ կայ մէկը, որ իմանում է, օր. բժիշկը, քահանան, կամ օրինակ մի սստիկան: Տարօրինակ, զարմանալի և առեղծուած են թուում հասակաւորներին մանկական հարցերից շատերը. օր. ամերիկացի 9 տարեկան մի մանուկ փոքր լուութիւնից յետոյ հարցնում է. «Ինչու ես չեմ մտածում նորա մասին, թէ ի՞նչ պէտք է ասեմ»: Երեք տարեկան և մի ամսական մի աղջիկ թողնելով իւր խաղալիքներն ու փոքր քրոջը՝ Էղնա Բէլլին, վազեց մօտ ու հարցրեց. «Մայրիկ, ասա, ինդրում եմ, ինչու ես էղնա Բէլլը չեմ, և էղնա Բէլլը ես չեմ»: — այս տեղեկութիւնները հաղորդողն ասում է, որ այդ աղջիկը ոչ թէ մի ուսուցապետի աղջիկ էր, այլ մի հասարակ ընտանիքից: Միթէ այս հարցերը ցոյց չեն տալիս նորա ինքնագիտակցութեան հասնելը: Նոյն տարիքի մի ուրիշ աղջիկ աւելի վերացական բովանդակութեամբ այսպիսի մի հարց է տալիս. «Եթէ ես

կարողանայի դէպի երկինք բարձրանալ, արդեօք կարող է Աստուած այնպէս անել, որ ևս չը կարողանամ համեր այդ նպատակին». սա մի գեղեցիկ օրինակ է, ցոյց տալու համար մանկան, թէ Աստուած կարող է եղած իրը չեղած դարձնել. հարցեր, որ ինչպէս էրազմն է ասում, մի ժամանակ խիստ զբաղեցնում էին աստուածաբաններին:

Մի քանի մանուկներ մտածերզ վերացական ոգիների կամ Աստուծոյ դոյութեան մասին, յաճախ այնպիսի հարցեր են տալիս, որոնք աստուածաբանական բնաւորութիւն ունեն: Յաճախ նոքա հարցնում են. «Միթէ կարեոր է որ չարը դոյութիւն ունենայ»: Օր. 8 տարեկան ամերիկացի մի մանուկ հարցնում է իրանց տուն եկած քահանային. «Ի՞նչու Աստուած չի սպանում աստանային, այն ժամանակ աշխարհում այլ ևս չարութիւն չի լինի»:

Բայց մանկանց բոլոր հարցերն այս ուղղութիւնը չունին, նոքա շատ անդամ այնպիսի հարցեր են տալիս, որոնցով կամենում են հնարաւոր և կարեոր բացատրութիւններ ստանալ: Շատ հարցեր, որ ըստ երեսյթին վերացական են, ունեն իրանց ուսումնական նշանակութիւնը և ցոյց են տալիս, որ մանուկը ուղում է մի լուրջ ինդիր վճռել: Օր. 3 տարեկան 9 ամսական մի մանուկ հարցնում է. «Ի՞նչու մենք երկու աչքով չենք տեսնում երկու տարբեր առարկաներ նոյն ժամանակ», —մի հարց, որ քիչ չէ զբաղեցրել հոգեբաններին: Երբ մանկան հարցերն արդէն որոշ ուսումնական ուղղութիւն են ստանում, այնուհետեւ նկատում ենք, որ «ինչու համար» «ի՞նչու» հարցերը երկրորդական տեղ են բռնում և հանդէս է գալիս համեստ հարցը՝ «ի՞նչպէս». մի մանուկ հարցնում է. «Ի՞նչպէս են անում մեր տնկած ծառերը, փոքր երեխաներն այնպէս են մեծանում, ինչպէս ես, ես մեծանում եմ, երբ կերակուր եմ ուտում, նայիր», —այդ ժամանակ նա կանգնում է և աշխատում է մեծ ձեանալ: Մտքի աւելի կանոնաւոր ուղղութիւն երեւմ է 5—6 տարեկան հասակում, օր. 4 տարեկան 7 ամսական մի աղջիկ կամենում էր իմանալ՝ ինչու է ստիպում երկաթուղու գնացքին դնալ, կամ մենք ինչ-

ոլէս ենք աչքներս շարժում։

Ուշ գարձնելով մանկանց հարցերին, մենք տեսնում ենք, որ այնքան էլ հեշտ չէ բոլորի միտքն ու նպատակը որոշել, շատ անդամ մանուկը մեքենայօրէն հարցնում է որևէ բան, առանց ցանկանալով դորա պատասխանով մի նորութիւն իմանալ և բաւականանում է ամէն մի պատասխանով, կամ՝ շարունակում է անդադար հարցումներ տալ մանկենդան, մեռած եղանակով, որից երեսում է որ այդ հարցերը ծագում են ոչ թէ նորա առողջ մտաւոր գործունէութիւնից, այլ մի տեսակ հիւանդ գրութիւնից։ Օր, նա հարցնում է՝ «Ինչու բաժակը բաժակ է, իսկ աթոռը աթոռ»։ Ի հարկէ, չպիտի այս դէպքերն ընդհանրացնել և արհամարհանքով վերաբերուել դէպի մանկանց հարցումները. փոքրիկ մանուկները մեզ հարցեր ուղղելով համարում են մեզ ամէնագէտ, ուստի և մենք պիտի ուշադրութեամբ հետեւենք նրանց. և եթէ երբեմն մանուկները մեզ չարչարում են անվերջ թեթևամիտ հարցերով, այնպէս էլ մենք յաճախ մեր կողմից, երբ բոլորովին անարդարացի արհամարհանքով ենք պատասխանում նրանց հարցերին և կամ կոպտութեամբ անպատասխան թողնում, մեծ ցաւ ենք պատճառում նրանց։ Որպէս զի շատ լաւ հասկանանք և պատասխանենք մանկանց հարցերին, դորա համար հարկաւոր է խորին և բազմակողմանի տեղեկութիւն, ընդունակութիւն խոկոյն թափանցելու նրանց մտաւոր աշխարհը և մտածութեան եղանակն ըմբռնելու, որի համար և շատ քչերն ունեն մտաւոր և բարոյական պատրաստութիւն։ Մարդկային կեանքի մէջ ամենացաւալի գրութիւնն այն ժամանակն է, երբ փոքրիկ ու կրակոտ մանուկը, որ զարմանալի սրատեսութեամբ դիտում է հրաշալիքների աշխարհը, յաճախ իւր կեանքի ընթացքի հենց առաջին քայլափոխում պատահում է այնպիսի դայեակի կամ մօր, որ նորա հարցերի մեծ մասը համարում է անախորժութիւններ, իւր անմիտ ու անհոգ կեանքի խանդարում։ Անչափ մեծ է այդ չարկը, և անհնար է կշռել ու որոշել, թէ որքան

անգնահատելի մտաւոր գործունէութիւններ են շղթայուել, որքան յոյսեր ու աշխոյժ կեանքեր ճնշուել այդպիսի յարաբերութիւնից։ Բայց բարեբախտաբար մանկանց մոքից չի կարելի արմատախիլ անել հարցասիրութիւնը և այդպիսի շրջանում մեծացող մանուկը, երբ չի անյետանում նոռա հոգուց գիտելու ու զննելու ընդունակութիւնը և հետաքրքրութիւնը, կարող է պատահել մի մարդու, որը բարի կը լինի իւր գիտութեամբ գոհացնելու մանկական այդգեղեցիկ և անգնահատելի յատկութիւնը։

Քաղաւածք „Եւստիկ Յօսպիտանիք“ ամսաթերթից.

**Ա. Շահն.**



## ՕԳԻՒՍ ԿԱՐՐԻԷՐ \*

(↑<sup>12</sup>|<sub>25</sub> յունուարի 1902).

1868 թուին, երբ մի փոքրիկ խումբ բաց էր անում՝ Պարիզում բարձրագոյն դպրութեանց ուսումնաբանի Պատումա-լեզուաբանական ճիւղը՝ Օգիւստ Կարրիէրը գեռ չէր մասնակցում այդ խմբին. բայց երբ, 1870—1871 պատերազմից անմիջապէս յետոյ՝ նա այնտեղ ոտք գրեց, նոռա տեղը որոշ էր՝ իւր բացառիկ քննադատող մաքի և լեզուաբանութեան մէջ ունեցած մանրակրկիտ և խոր գիտութեան շնորհիւ. Այդ օրուանից սկսած նա դասախու-

\* Թարգմանաբար յառաջ ենք քերում ուսուցապետ Մէյ-ժէի իւր բարեկամ և ուսուցել յայտնի հայագէտ հանգուցեալ Կարրիէրի յիշատակին նույնածած այս գեղեցիկ յօդուածը, որ մէնք ստացել ենք առանձին բըոշիւրով, երես արտատպուած մի գիտական հանդէսից։